հինները Լայն..., ինչպէս նաև պարզ ժողովուրդը, երբէք հեռատամուտ չեն լրագիր կարդալու, ու երգեցիկ որճարաններու և զեղխութեան մէջ կը ոպաննեն իրենց ժամանակը։ Տարսոնի մէջ հաղիւ 4—5 թերթ կերթայ եղեր, և անոնց ալ երեքը հայատառ թուրքերէն «Աւետաբեր»ն է։ Նամակագիրը կը փափաքի որ օրաթերթերը ծաղկին և վերացուի ո՛չ միայն Տարսոնցիներուն, այլ և ուրիշ բոլոր քաղաքներու Հայոց անընթերցասիրութիւնը։ Ի՞նչ օգուտ սակայն այդ գրուելիքներէն, երբ մարդիկը թերթ չեն կարդար արդէն։ Չիրենք կարգի բերողը տեղւոյն եկեղեցականութիւնը և ուսուցիչները միայն պիտի կրնան ըլլալ. ցաւալի է որ անոնք ալ կարգի գալու պէտք ունին եղեր։

# ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՏԵՆԱԴԻՐԸՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Չերդ Վեհափառութիւն

Արդէն բաղդ եմ ունեցել Ձեր անուանակոչութեան օրը հեռագրով հաղորդել, որ ես գնել եմ հանգուցեալ Աղէքսանդր Երիցեանի գրադարանը և ընծայաբերել եմ ս. Էջմիածնի մատենադարանին։ Այդ ընծայաբերութեամբ իմ լուման տալով Մայր Աթոռի պայծառութեան՝ ես ցանկացայ նախ ի յինչսակ իմ հանգուցեալ կնոջ մի բարի գործ անել, որի անուան նուիրում եմ այդ գրադարանը, և ապա՝ որ հանգուցեալ հայ հնագէտի թանգագին գրադարանը պահպանուի անթերի կերպով Մայր Աթոռի մէջ, որպէս զի նրանից շարունակաբար օգտուին թէ վանքի միաբանները և թէ հայկական կեանքով հետաքրքրուող անձինք։

Վեհափառ Տէր, խնդրում եմ, հաճեցէք ընդունել իմ այդ ընծան, և ա) կարգադրել, որ նա ծառայէ իւր իսկական նպատակին. բ) հրամայել որ բոլոր գրքերի ցուցակը տպագրուի առանձին բրոշիւրով. գ) որ այդ ընծան ընդունուի իմ հանգուցեալ կնոջ՝ Մա-

ըիամ Յովհաննիսեան Աւան-Իզբաշեանի անունով. դ) գրքերը պահել իմ ծախքով չինուելիք յատուկ պահարանների մէջ և իրաւունք տալ մատենադարանի Վարչութեանը միայն անհրաժեշտագոյն դէպքերում գիրք տեղափոխել այնտեղից. և ե) բոլոր գրքերի վերայ բացի մատենադարանի կնիքը դրոշմելուց՝ դնել և յատուկ կնիք հետևեալ մակագրութեամբ. «Մատենադարան Ա. Երիցեանի, ընծայաբերեալ ի Դ. Աւան-Իզբաշեան»։

Պատիւ ունիմ յայտնելու, որ ես օգտուելով հայր Մեսրոպ վարդապետի ներկայութիւնից քաղաքումս՝ խնդրեցի նրան անձամբ Թիֆլիսում ստանալ հանգուցեալի ժառանգներից մատենադարանը համեմատ ցուցակների և հասուցանել Մայր Աթոռ։

Ընդ սմին յայտնում եմ Ձերդ Վեհափառութեան, որ ես լսելով թէ Մայր Աթոռում չկայ մատենադարանի համար յարմարաւոր շինութիւն՝ որոշեցի այդպիսի շինութեան համար տալ այժմէն իսկ հինգ հազար ռուբլի։ Այդ գումարը դնում եմ Տէր Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանի տրամադրութեան տակ, որպէս զի նա օրհնութեամբ և հաճութեամբ Ձերդ ս. Օծութեան վանքի պարիսպների սահմաններում, Ձեր ցոյց տուած տեղը, հիմնարկէ մեր Մայր Աթոռի անուան պատուաբեր մի գրադարանի յատուկ շինութիւն։ Ես վստահ եմ և համոզուած, որ ի նպաստել հանգամանաց, եթէ ոչ այս՝ հետևեալ 1904 թուականի ընթացքում կարող կը լինիմ շինութեան ամբողջ ծախքը, մինչև 15,000 ռուբլի, մատակարարել։ Ներկայումս էլ խնդրում եմ իմ առաջարկած գումարը գործադրել հետևեալ եղանակով. ա) մասնագէտ ճարտարապետի յանձնել շինութեան համար յատակագիծ կազմելը. բ) պատրաստել նշանակուած գումարի համեմատ նախահաշիւ լինելիք ծախքերի. և գ) շինութիւնն ընդունել իբրև նուէր յանուն Դաւիթ բէկ Աւան-Իզբաշեանի։

Որդիական ակնածութեամբ համարձակւում եմ հայցել Վեհափառութեանդ սուրբ օրհնութիւնը իմ զաւակների և իմ տան վերայ, մաղթելով ի համբոյր սուրբ աջոյդ

Դաւիթ բէկ Աւան-Իզբաշեանց

5 Փետրուարի 1903 թ.
ի Բագու.